№ 176 Հոկտեմբերի 4 (16) 1880 Հոկտեմբերի 4 (16) № 176

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզուի ուսում։—Ներքին տեսութիւն։ Նամակ Գանձակից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան գործեր։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Քաղուածք մի ձեռագիր յիշատակարանից։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄԸ

«Մշակի» հրատարակման առաջին տարուց սկսած մենք միշտ այն միտք էինք յայտնում որ մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը ոչ թէ միայն անհրաժեշտ է որպէս յատկանիշ այն ազգութեան, որի սեփականութիւն է յիշեալ մայրենի լեզուն, բայց որ մանուկը կարող է հասնել կանոնաւոր մտաւոր զարգացման աստիճանին միայն մայրենի լեզուով տարրական ուսմունքներ ընդունելով, որովհետև մայրենի լեզուն հետևանք լինելով մանուկի ցեղական, ֆիզիոլոգիական կազմուածքի, ինչ կրօնի և պատկանէր այդ մանուկը, աւելի է յարմարվում նրա ուղեղի կազմակերպութեանը, ուրեմն աւելի էլ նպաստում է այդ ուղեղի կանոնաւոր, բնական գործակատարութեանը, նրա ֆիզիոլոգիական կանոնաւոր զարգացմանը, քան թէ մի օտար լեզու։ Մայրենի լեզուով աւանդած միտքը աւելի ըմբռնելի է երեխայի ուղեղին, աւելի հասկանալի է նրան, աւելի նպաստում է նրա մտաւոր կանոնաւոր զարգացմանը, քան թէ օտար մի լեզուով արտայայտած նոյն միտքը։ Իսկ մանկավարժութեան նպատակը ի՞նչ է, եթէ ոչ ամեն ջանք գործ դնել կանոնաւոր, բնական կերպով զարգացնել մանուկի ուղեղը, որպէս զի նա աւելի ընդունակ դառնայ, աւելի պիտանի դառնայ թէ իր անձի, թէ իր ազգի և թէ ամբողջ պետութեան համար։ Մեր նպատակը պէտք է լինի պատրաստել ընդունակ, զարգացած, պիտանի, օգտակար քաղաքացիներ։ Որքան հայը կամ վրացին կը զարգանան որպէս հայեր և վրացիներ, այսինքն կը զարգանան մանկավարժական կէտից կանոնաւոր, բնական կերպով, այնքան նրանց ուղեղը կը մշակվի, նրանք աւելի կատարեալ մարդիկ կը լինեն, ուրեմն և աւելի պիտանի քաղաքացիներ կը լինեն ամբողջ պետութեան։

Մայրենի լեզուի ուսումնասիրութեան վրա ուշադրութիւն դարձնելը մենք մեզ համար նպատակ էինք դրել թէ «Մշակի» ինն տարվայ գործունէութեան մէջ, թէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձու եղած ժամանակ, առաջարկած լինելով պատրաստական դասատան համար մի ծրագիր, որ ամբողջութեամբ հիմնվում էր մայրենի լեզուի ուսումնասիրութեան սկզբունքի վրա, վերջապէս նոյն միտքը մենք պաշտպանեցինք և Դումայի մէջ, երբ ձայնաւոր եղած ժամանակ մեզ աջողվեցաւ առաջարկութիւն անել որ Թիֆլիսի արուեստագործական դպրոցի մէջ հիմնվեն երեք զուգընթաց դասատներ՝ մինը ռուսերէն, միւսը հայերէն, երրորդը վրացերէն լեզուով։

Այն ժամանակ Դուման միաձայն ընդունեց մեր առաջարկութիւնը և ահա այժմ մայրենի լեզուի միջոցով առարկաների աւանդելը իրագործված ենք տեսնում Թիֆլիսում այս օրերս հիմնված Մելքոյէլեան արուեստագործական դպրոցին հետ միացրած քաղաքային ուսումնարանի մէջ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՂՈՒԱԾՔ ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Ա.

«Մայրս ինձ աշխարհ է բերել մի գիւղի անկիւնում։ Հայրս, Վերին Բասենցի, 1823-ի տասուած եկողներէն է։ Մեր տան տաճկերէն գրուած կալուածագրերէն հինը 110 տարուան է, և բոլոր գրերն ասում են թէ մեր պապերը յիշեալ գաւառում կալուածք ունեցել և հողավատակ մարդիկ են եղել։ Մի գերդաստանական աւանդութիւն մեր տոհմի լունը Թորդումում է դնում, և ասում է թէ մեր նախամամը, որմէ այնդին այլ յիշատակ չը կայ, յոյն է եղել. թէ նա քանի մի որդի է ունեցել, և հարուստ կալուածքներ. թէ տաճիկ իշխաններն առաջարկել են նոցա յանձն առնուլ կամ հաւատները փոխել կամ կալուածներէն զրկուիլ. թէ այդ կինը, տեսնելով որ մեծ որդիները մերժեցին հաւատուրացութիւնը, դիմում է փոքրին՝ աղաչելով որ յանձն առնու և չը զրկուի այնքան կալուածներէ. սա ևս մերժում է։ Աւանդութիւնը չի յիշում թէ ինչ է եղել այդ, և թէ այնուհետև ինչ մեր տունը գաղթական է եկել Վերին Բասեան։ Բայց մի կողմ տոհմագրութիւնը։ Այդքանն էլ որ արի, նպատակս ուրիշ էր։ Մի փոքր գերդաստանի մէջ երբեմն մի ամբողջ ազգի պատկեր կարելի է լինում տեսնել։ Օտարամուտ և բնաւոր իշխաններու բացարձակ կամքին ձեռք խաղալիք մանուած՝ տէրութենէ հպատակ և հպատակութենէ ծառայ ենք եղել դարձած, և այդ վիճակին մէջ ևս աւելին այն է որ, թողնելով մեզ վարողներուն մեր քրտնքի արդիւնքը, ինքներս հարկուած ենք եղել վտարական գնալ ամենուրեք՝ որ ինչ է փրկենք ամեն ինչ եղծող ազդեցութենէն մեր հաւատքը գտնէ և մեր յոյսը։ Անտառի անասունին կամ երկնքի թռչունին նման մեզ տեղէ տեղ հալածել, մեզ դիւաղադար են արել այդ անողորմ դրսորդները։

«Իմ մատաղ մանկութեանս մէջ, հօրս յարկի տակ՝ մայրս է առաջին անգամ շրթունքս վարժեցուցել հայ այբուբենի սրբազան տառերը հնչելուն։ Ո՞վ տղայութեանս ամենաքաղցր և ամենաանմեղ իշատակներ։ Զմեռ էր.—մօրս մատներով կարուած սիրունիկ շապկի մէջ անցուցած քերեկանս ձեռքս՝ գնում նստում էի իմ Սարտար կամ իմ Նազլի անուն եղներուս մարքի մէջ, կամ եթէ պառկած էին՝ նոցա կուրծքին մօտիկ, կռնակս իրենց ձմեռուայ փափկացած ու գեղամաղ տաքուկ կաշուն դէմ արած, իրենց ախորժելի փնչիւնի տակ հընչում էի— այբ, բեն, գեմ, կամ այբ, ժէ, ձէ, ռա, կամ վանկում էի բեն, այբ՝ բա, կամ կապում էի – բեն, այբ՝ բա, գեմ ինի նու՝ գին, բաղեն. բեն, այբ՝ բա, դա է զէ, բաղէ։ Գարուն էր.—դռները դատարկ էին, Սարտարն ու Նազլին իրենց ընկերներով գնացել էին՝ արօրով դաշտը պատառելու, արտեր ցանելու, մսրքները հաւերուն թողնելով. այդ ժամանակ էլ ես սիրում էի գոմը, որովհետև սիրում էի դոխերս, որոնք բոլորն էլ իրենց յատուկ անունն ունէին։ Երբ գարնան շէկ արեւիկը գոդի պէս երդքէն ներս էր սահում մի բարակ սիւնով, և պատի հետ կամացուկ վայր էր իջնում գոմի մէջ տեղը, ներս էինք վազում ես ու դաս ընկերներս, աղջիկ ու տղայ խառն, մի փոքրիկ մատաղերամ, և նրա շուրջը բոլորուած՝ ձայն ձայնի տուած կարդալով եղանակում էինք, որքս քերեկան, ուրքս փոքր սաղմա. երբ դասերս սերտ էինք, արեւիկի հետ էինք սկսում խաղալ, կամ պաշմոյի էինք խաղում, կամ մանաւանդ աղաւնի ներու ելէջը տեսնելով, ելմուտը դիտելով զուարճանում։ Այդ անման օրերը իրենց բիւրազան զբաղմունքներով ու զբօսանքներով քեզ մաներ պատելը երկայն կը լինի։ Զորս՝ հինգ ամիս մեր ուսումն ընդհատվում էր գառներ արածելու, որ մանուկներու յատուկ գործն է՝ դեռաբուսիկ ցօղաթուրմ դալարիներու մէջ, քաղի ու կալի կոի ժամանակներ են. շարժուն և եռ եկող կեանքը արձակ օդումն է, դաշտումն է, բլրներու վրա է, կալերումն է։

«Եօթներորդ տարիէս մինչև տասներորդս՝ մայրս է ինձ ուսուցել այդ կերպով. նա ինձ ուսուց նաև գրիչ լռնելը. իւր ձեռքի տակ կարդացի քերեկան, պզտի սաղմոս, մեծ սաղմոս։ Ախ, նա ինձ սովորեցուց, ինչպէս մոռանամ, «Երանեալ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից նա ոչ նստաւ»։ Երբ սկսում էինք փոքր սաղմոն արձակ կարդալ, առանց կապելու, և չանում էինք հիշեցուք զկապանս նոցա, և ընկեցուք ի մէնջ զլուծ նոցա», մի մեծ տօն էր. տօն էր, բարեկամ, մի մեծ տօն էր։ Կապանքները կտրուող աշակերտը բացշուրթն սաչանով խեծաղ կը բերէր վարժապետուհուն. ազնիւ քիշմիշը, կամ երբեմն մեղրը, կամ երբեմն ռուփը՝ խեծաղի ճաշակը աւելի անուշցնում էին. ամեն մէկիս բաժին էր հանվում։ Ուստի մեզ այդ պապենական սովորութիւնը. ինչու այդ խօսքին հասած անպատճառ կատարում էինք այն մանկական տօնը։ Յաղկերտ՝ թէ Բուղայի, Լէնկեմուրի թէ մի ուրիշ բռնաւորի օրերէն մնած էր այդ սովորութիւնը, որ խոհեմութիւնը մանուկներով սկսել տուել ու մանուկներով պահպանում էր։

Բ.

«Մի աշունք, իմ տեսածներէս տասնեմեկերորդը, մի երկայն ճանապարհի վրա էինք՝ մայրս և ես, նա ձիու վրա էր, իմ հեծածս էր մի խոշոր և լաւ գնացիկ աւանակ. նաև մի ուղեկից առաջնորդ, ազգականներէս մէկը. և նա հետի էր։ Արևը տաքացնում էր մեր կռնակը. լուռ էր ճանապարհը. ուրիշ ընկեր չունէինք, բայց եթէ մեր ստուերները՝ որ մեզնէ առաջ էին գնում։ Այդ խորին լռութեան մէջ մի չոր ձայն, որ թեթև բայց անդադար լսվում էր ծեծուած գետնի վրա, այն՝ մեր անդրուպարներու ոտի դոփիւնն էր. և երբեմն նաև նոցա փռնչիւնը սթափեցնում էր մեզ այն մի տեսակ թմրութենէն, ուր մարդ ոչ քնում է՝ ոչ մրտածում է, և ոչ, համարձակում եմ ասել, լսում է. բայց եթէ մի մեքենայաբար լսել, ուր ըմբռնումը՝ կամ միտքը բնաւ գործակցութիւն չունեն։ Ոչ, մեր երկրի կեանքի ճշգրտագոյն նկարն էր դա՝ դանդաղ և մեքենայաբար շարժումն. կարծես մարդը՝ ապրելէն ճանձրացած, մի տեսակ թմբրութեան մէջ սպասում էր թէ երբ կը հասնի աչքը փակելու րոպէն։ Եթէ մի ցնցում մեզ չը սթափեցնէր, դեռ այսօր էլ մի և նոյն թմբրութեան մէջ կը լինէինք։—Այդ կախարդական լռութեան ծոցում երբեմն դարթնում էր իմ մանկական երևակայութիւնս. սրտաղող կարծում էի թէ հիմա մի ժայռի ետևէ, մի փլի տակէ, մի ձորի միջէ կելնեն ձիաւորներ։ Մեր ճանապարհներու սովորական արկածը, որ երկայն ժամերու միօրինակութիւնը երբեմն կտրում է, աւազակներէ կողոպտուիլն է կամ հաւի նման անձայն մորթուիլը։ Երկիւղս աւելի տեղիք ունէր, վասն զի թիւրքի հողի վրա էինք։ Երբ հեռուէն տեսնում էի ճանապարհի վրա որ և է գիւղի ծխի ծոյլ ծոյլ, ոլոր մոլոր բարձրանալը, երևակայութիւնս էլ հետն էր բարձրանում. երբ անցնում էինք գիւղի միջով, հայի լինէր թէ թիւրքի, և տեսնում էի այն ինձ օտար օտար դէմքերը փափախի կամ փակեղի տակ, որ տանիքներու վրա կանգնած՝ լայն աչքերով մեզ էին նայում, ասում էի ինքիրենս, գիւղէն հեռացանք թէ՝ գուցէ այս գոտէպինդ մարդիկը ձի հեծնեն և հգան մեր ետևէն, վայ մեզ այն ժամանակ։

«Ներ առաջին օթեւանը մի հայ գիւղ եղաւ։ Շատ տարի վերջը, և շատ ժամանակ չէ, պատահեցաւ ինձ նոյն գիւղը կրկին տեսնել. բայց այնտեղ չը գտայ հինգտասնեայ բնակիչները։ Ինձ պատմեցին որ նոքա, արտասունքն աչքերում՝ կրակը սրբտերում, ակամայ թողնելով իրենց պապերու և ջերմ սիրելիներու գերեզմանները, իրենց հացաւէտ դաշտերը, եկել քաշուել են այն լեռան կողքը, ուր տաճիկ զօրավարն յաղթեց և յաղթուաւ. այն հսկայ գերեզմանի վրա պիտի բնակութիւն դնեն։ Նոցա փոխանակ՝ տեսայ վալական աղջկանց ու կանանց և նոցա սագերու լողանալը Բաղրատունեաց ջրերու մէջ։ Որտեղից ուր։

«Բայց դեռ հասցի թէ ուր էինք գնում։ Դէպի Տաճկա-Հայոց մայր կոչված քաղաքը։ Մայրս այնտեղ պիտի տեսնէր իր եղբայրներն ու ազգականները. ես՝ ով գիտէ ինչ պիտի անէի. պիտի ուսանէի. ինչ և իցէ, մօրս հետն էի. և որովհետև դեռ փոքր էի, իրաւունք ունէի միշտ իր հետը լինել։ Մի այլ օր մենք օթեւանեցինք մի քրդի գիւղ։ Դիտմամբ իջել էինք՝ աղայի տունը։ Մեծ սիրով հիւրընկալեցին մեզ և մեծարեցին։ Ինչպէս սիրուն շինուած էր նոցա գոմի սենեակը. երկայնադիր, պատերը շիտակ ու բարձր և սպիտակ. առաստաղը՝ երկայնութեան վրա գոգաւոր, Սողանլուի մայր փայտի աղնիւ, բարեշէն և երկայնաձգակ տախտակներէն յօրինուած. սենեակի մէկ ճակատը և միւսը՝ բարձրերում նոյնպէս տախտակամած՝ գունակար զարդարուած էին, կամ այլ և այլ զարդերով փորուած. սիրուն ու սրբատաշ շինուած էր նաև վառարանը՝ օճախը, ուր հիւրերուս համար՝ ցախի ու խռիներու կրակը մերթ անուշ փայլփլում էր, և մերթ ճարճատելով բալաբոց է

Ռուսաց «Կովկաս» լրագիրը թէև ընդդէմ չէ այդ մանկավարժական սկզբունքին, բայց ասում է, որ հարկաւոր էր այդ սկզբունքը կատարելապէս իրագործելու համար մտցնել դպրոցի մէջ ոչ թէ միայն երեք գլխաւոր տիրապետող լեզուները, այլ Կովկասում և Անդրկովկասում եղած բոլոր մանր մունր լեզուները, կամ եթէ չէ կարելի, պահպանել միայն ռուսաց լեզուն: Նախ օսերէն կամ աւարերէն լեզուներով չէ կարելի աւանդել ոչինչ առարկաներ, որովհետև այդ լեզուները չունեն ոչ անցեալ, ոչ գրականութիւն, ոչ տառեր, ոչ կլասիկային լեզու հայերէնի և վրացերէնի պէս, երկրորդ՝ այնու ամենայնիւ մանկավարժական ճիշդ սկզբունքին աւելի յարմար է որ մտցրած են երեք լեզուները, և աւելի հեռու կը լինէինք մանկավարժական ժամանակակից պահանջներից, եթէ մտցնէինք միմիայն մի լեզու: Եթէ չենք կարող հազար և մի լեզու մտցնել, աւելի լաւ է որ երեք տիրապետողներն ենք մտցրել, քան թէ եթէ միայն մինը մտցնէինք....

Ուշադրութիւն ենք դարձնում մի և նոյն ժամանակ «Կովկաս» լրագրի № 262 մէջ տպված Կովկասեան ուսումնարանական հոգաբարձու պ. Յանովսկու շրջաբերականի վրա, որի մէջ նա յայտնում է այն միտքը, որ մայրենի լեզուն ոչ թէ միայն տեղացիներին անհրաժեշտ է, բայց և Կովկասեան ռուս երեխաները, մանաւանդ պաշտօնեաների զաւակները, որոնք իրանց նուրուիմեն ադմինիստրացիայի, պոլեցիայի կամ դատարանների մէջ ծառայելուն, պէտք է տեղական լեզուներից մինը սովորեն: Այդ նշանաւոր շրջաբերականը մենք կաշխատենք արտատպել «Մշակի» մէջ:

Եւ Կովկասը ու Անդրկովկասը գիտնական կէտից ուսումնասիրելու համար անհրաժեշտ կը լինէր որ ռուսները ուսումնասիրէին տեղական լեզուները: Այդ մասին յոյս ունենք դարձեալ խօսելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

22 սեպտեմբերի

«Մշակ» լրագրի 131 համարում, Գանձակ քաղաքում անցեալ տարվանից հիմնված ցորենի կոմիտեի հաշուէտուութեան վերաբերմամբ, տպագրված Նամակս փոքր աղմուկ չը բարձրացրեց. ամեն մի քայլափոխում պատահում էին անձինք կամ ուրախ-ժպիտը երեսին հասարակութեան անմեղ անդամներից և կամ յօնքերը կիտած, կնճռոտ ճակատով ցորենի կոմիտեի անդամներից. պատմում էին միմեանց Նամակի բովանդակութիւնը և ամեն մէկի բերանից լսվում էր. «ըհը, խոմ կարդացիք, դէհ, սպասենք, եթէ կոմիտեը կամովին հաշիւ չը տայ, մենք կը պահանջենք...» Բայց ցաւելով պէտք է ասեմ, որ Գանձակում ամենայն ինչ լռութիւն է, վառվում է, քանի որ կրակը մօտեցնում ես, էնց կրակը հեռացրիր թէ չէ, հանգաւ, սառաւ ամենայն ինչ: Այսպէս էլ պատահեց իմ Նամակիս հետ. նոր կարդալիս վառվում, ոգևորվում և պատրաստվում էին հաշիւ պահանջել կոմիտեից, էնց որ անցաւ մի քանի ժամանակ, ամենայն բան մոռացվեց, դարձեալ ընկան խորը թմրութեան մէջ: Մեր պատուելի կոմիտեի անդամներն էլ, տեսնելով, որ հասարակութիւնը մոռացաւ, ոչ թէ կամեցան շուտով պատրաստել հաշիւները և հասարակութեան հետաքրքրութիւնը բաւականացնել, այլ ընդհակառակն, սկսեցին որոնել Նամակագրին, մէկ քանիներին սպառնալիքներ կարդալ, որից գրեթէ զարհուրած մեր քաղաքային բժիշկ պ. Համասիւռը իր համառօտ Նամակով «Մշակի» 151 համարում յայտնեց, որ Նամակի հեղինակը ինքը չէ:

Ես հաւատացնում եմ կոմիտեի պ. պ. անդամներին, որ նրանց հետ ոչինչ անձնական հաշիւ չունեմ, խոստովանվում եմ, որ Նրանք մի ամբողջ տարի իրանց գործերը թողած քաղաքի համար գործ կատարեցին, չարչարվեցան, իսկ մենք վառարանի առաջ նստած մեր քէֆն էինք առաջ տանում: Եւ մեր հասարակութիւնը առանձին յարգանքով պէտք է վերաբերվի նրանց, որովհետև սով ժամանակը մասամբ ապահովացրին մեզ: Եւ կոմիտեի անդամների պարտաւորութիւնն է հասկացնել, ցոյց տալ մեզ իրանց արածները, որ մենք էլ մեր պարտքը ճանաչելով, կարողանանք նրա համեմատ յարգանքը տալ: Գործը մթութեան մէջ պահելով, ինչու իլուր կասկածանք յարուցանել: Կոմիտեի անդամները իզուր են վրդովվում և սրան նրան մեղադրում: Ովոր ստացել է փողեր, հասարակութեան համար գործ է կատարել (շատ շնորհակալ ենք), պէտք է տայ իր գործունէութեան հաշիւը, այնպէս, ինչպէս ամեն մարդ սովոր է ստանալ իր գործակատարներից:

Այս անգամ ես չը կամենալով խոստմունքս կատարել, բաւականանում եմ միայն կոմիտեի անդամների անունները յայտնելով, հաւատալ լինելով, որ նրանք այնքան բարի կը լինեն, որ գոնէ այս անգամ հաշիւը կը հրատարակեն, իսկ հակառակ դէպքում, ես ստիպված, կը նկարագրեմ տեսածներս և լսածներս, մի խօսքով բոլորը:

Մի քանի խօսք էլ մեր պատուելի հասարակութեանը. բաւական է որքան քնեց նա անտարբերութեան և անհոգութեան քնով, չէ որ քունը մեռելութեան նշան է. պէտք է վերջապէս արթնանալ, աչք բաց անել և իր շուրջը նայել, քննել և տեսնել թէ ինչեր են կատարվում: Քաղաքի համար խմելու ջուր կը բերեն, հասարակութիւնը անտարբեր մնալով, թողնում է մի քանի պարոնների կամքին: Երեցփոխաններ են ընտրում և հասարակութեան անտարբերութեան շնորհիւ գերեզմանաքարերը վաճառում, իսկ նա չէ հետաքրքրվում: Դեպուտատներ են ընտրում, նրանց ամեն պահանջները կատարում են, բայց երբէք չեն կամենում հետաքրքրվել նրանց գործունէութիւնով: Հացի թանգութեան ժամանակը քաղաքի աղքատներին օգնելու նպատակով առատ նուիրատուութիւններ է անում հասարակութիւնը, բայց էլ չէ հարցնում ինչ եղաւ աւելորդ գումարը, բոլոր փողերը իրանց նպատակին ծառայեց թէ...

Այդ կոմիտեի անդամների անունները՝ Յակոբ Լիսիկեանց, և Հաջի Մամմատ Սոյուն Ալի օղլի (գանձապահներ) Պօղոս Մարգարեան, Սարգիս Ափանասեանց, Արշակ մահտ. Յովսէփեանց և Սողոմոն Նալչակարեանց (ցորեն առնողներ) մ. Յովհաննէս Վարդապետեանց, մ. Քերովբ Տ. Մարտիրոսեանց, Գրիգոր Փանոսեանց և Բասկի Նասյեանց (ցորենը ամբարից վաճառողներ), իսկ թուրքերի անուններով որքան հետաքրքրվեցայ չը կա-

---

հանում՝ երբ նիւթն յաւելցնում էին: Նստած էինք բազմոցներու՝ սեղանի վրա, որոնք երկու՝ կամ երկու և կէս կանգուն լայնութեամբ, և յատակէն մէկ կանգուն բարձրութեամբ, սենեակի մէկ դըլխէն՝ և երկու կողմանէ պատերու տակէն իրար զուգահեռական՝ գնում են մինչև միւս գլուխը՝ մինչև անդուռն մուտքի բերանը, ճիշտ մէջտեղը մօտ՝ կանգուն ու կէս լայնութեամբ մի անցք թողնելով որի վերի գլուխը վառարան է, և ներքինը՝ մուտքը: Դուռն կողմի պատը մարդաչափ միայն շարուած էր, և նա էլ երկու կողմանէ տախտակ էր ձեւացնում, կամ, ինչպէս ասացի, բազմոցներ՝ միւսներէն աւելի բարձր. նաև երրորդ պատը, յատկապէս դռմի կողմինը, կէսը միայն մինչև վեր շարուած էր, միւս կէսը դարձեալ մարդաչափ, դարձեալ բազմոցով էր, թիկունքի կողմանէ տախտակ քաշուած՝ իբրև ճաղ, որին կարող է դէմ անել իր կռնակը՝ նստողը, կամ կողքի նստած ժամանակ՝ թեը վրէն դնել իբրև յենարան: Այդպէս շինուած, դռմի մուտքը և դռմը տանուտիրոջ աչքի առջևն է, և անաուններու գով շնչովը անարգել տաքանում է նաև սենեակը: Մութն ընկել էր. սենեակի երդիքը կախել էին, և պապենական ճրագը կրակարանի վերևը աշտանակի կամ՝ այլազգաբար խօսելով՝ ճախի դաշի վրա դրուած, այնքան բարձրութեամբ որ միջահասակ մի մարդ ձեռքը դէպի վեր երկնցնելով հաղիւ հասնում է, իր կարմրաժեռ լուսովը կուում էր խաւարի հետ և իր մօտերը բաւական լոյս, որով սակայն կրակարանի մօտ նստած մարդն էլ դժուարութեամբ է ջոկում գրքի տառերը, իսկ հեռուները մի աղջամուղջ էր դոյացնում: Այդ լուսումթի մէջ, իրենց ալիքի և աստիճանի կարգովը բաղմած էին երեկոյեան խօսակցութեան համար ժողովուած քրդերը. պատուական թաղիքներու՝ քէչաներու վրա, որոնք յատկապէս նոյն բազմոցներու համար թափված լինելով նոցա մէկ գլխէն մինչև միւսը երկայնվում էին կտաւատի ձէնձոնի՝ ջակեանի վրա, որով նախ թաղիքը անվնաս պահպանվում է հողի ազդեցութենէն, և երկրորդ՝ նիստը կակուղ է լինում. դոցա վրա բազմած էին ասում եմ, ոմն ոտները տակը ծալած՝ տափակ նստած, ոմն մէկը միայն ծալած և միւսը առաջինի կողքին ուղղահայեաց դեռեղած և թեերը մերթ այս ձևով մերթ այն ձևով ծնկի վրա յեցուցած. ոմն չոռած, այլ ոմն՝ եթէ ալեոր էր մանաւանդ և պատուաւոր՝ վերի կողմերում բարձի վրա թեք ընկած և ոտները կէս պարդած, ոմանք առաջով նստած այնպէս՝ ինչպէս մենք ենք նստում աթոռի վրա, մի խօսքով ամենքն համեմատ իրենց աստիճանին և յարմարութեանը նըստած էին այն Մարերը, Աժդահակի թոռները, Հայաստանի Վիշապազանց այդ մնացորդները, որոնց երբեմն Արգամ էր հրամայում Հայոց դրօշակի տակ՝ օրինաւոր ժառանգի դատը պաշտպանելու համար, իսկ այսօր մի Մուսաֆա կամ մի Աչմէտ առաջնորդում է յեղուզակութիւն անելու, արիւն խմելու, սրբութիւններ պղծելու, բռնաւորներ պաշտպանելու համար: Դա մի ակումբ էր, կամ եթէ կուզես եւրոպանալով ասեմ մի քլուբ էր՝ կլուբ էր՝ ինչպէս կախորժեմ, որ ամեն երեկոյ տեղի ունի մեր երկրում գիւղի առաջաւորներու սենեակներում՝ ձմեռ ժամանակ: Խօսում էին նոքա ընական է քրդերէն. քաղաքակրթուած՝ կամ այնքան ստրուկ չէին, այն քաղաքի պէս՝ որ այս առաւօտ եռներս թողինք, որ չը գիտենային իրենց լեզուն՝ կամ արհամարէին. միան երբեմն մարդավարութեամբ փոխում ու թուրքերէն էին խօսում իրեն հիւրերու հետ՝ այլ և այլ հարցուփորձեր անելով: Այդ ազատ մարդիկը կրքով սիրում են իրենց նիզակն ու իրենց ձին, և արդարև միշտ ու միշտ ազատն են նոքա այն նժոյգ, օդապարիկ երիւարներու վրա, իրենք ոտից ցգլուխ կարմիր հագած, վահանիկները կարմիր, նիզակի պուխ փունջն էլ երբեմն կարմիր, իրենց թաղեայ գլխանոցի վրա կարմիրը կան անչի հետ փաթաթուած. արծրուունգն, աչքերը կրակոտ, յօնքերը խիտ ու կամարակապ, ընչացքները թանձր, և եթէ ալեոր են՝ սպիտակ մօրուքները կուրծքերուն վրա ալեծածան փռուած. արդարև գեղեցիկ ձիաւորներ: Այդպէս մարդիկ, որ թուրը մէջքերումն ունին և բուռը դաստակի վրա, սողալ և անպիտանանալ չը գիտեն:

«Գիշերն արդէն յառաջացել էր. շները բարձր տանիքներու վրա պպզած՝ աստղերն ի վեր հաչում ու տխուր ձայնով ոռնում էին. ժողովականներն սկսան մէկ մէկ քաշուիլ, աւելի ընտանիներն և կարևորներն ամենէն ուշ մնացին. երբ սոքա էլ հագան իրենց կարմիր ոտնամանները՝ ջիլմէներն, և վրէներն ապաներն՝ այն իրենց քրդանակ վերարկուներն առած գնացին, եկաւ իրիկնաշացը. դրին կրակարանի առջև սեղանը՝ խօնչան, շարեցին վրէն բոլորի քրդի հաստ լաւաշը. բոլորուեցանք շուրջը երեք հիւրս, տանուտէրը՝ մի պատկառելի ծերունի, և էլ չը գիտեմ ով. նոքա մեծարեցին մեզ իրենց մառանի բարիքէն, ձուն՝ խաշած թէ ձուածեղ՝ միտս չէ, կարագը և մածունը ուսիով՝ որ մեղր չեղած ժամանակ նորա տեղն է բռնում, և լօռը կամ ժաժիկը. մենք մեր ճանապարհի պարկէն հանեցինք նոցա համար հայ գաթան. անապակ ջուրն էր մեր գինին, որ լօռի վրա մանաւանդ խիստ շատ հարկաւոր է:

«Մի և նոյն սենեակում ձգին մեզ համար տեղ մաքուր անկողին, վերմակի վրա նաև քրդիդործ կապերտը. չը մոռացան նաև մոշրոպայով ջուր մօտերս դնել: Առաւօտուն բարիլուսու հետ զարթեցանք, որ սենեակի բացուած երդէն ներս էր մտել. աչքերս բացի թէ չէ՝ պատկառելի ծերունին տեսայ, որ վերի բազմոցի վրա եկած՝ իր Աստուծուն երկրպագութիւն էր անում: Մինչ մեր անասուններուն ջուր ու գարի էին տալիս, և դեռ միջոց կար մինչև ճանապարհ ընկնելը, մօրս հետ գնացինք տուն. կին և աղջիկ պատեցին մեզ սիրով ու հետաքրքրութեամբ. հարցնում էին հայ կընոջը, տեղեկանում էին, բաներ էին ուզում սովորել. նորա ծիրանի զգնոցն շատ հաւնելով՝ հարցնում էին թէ ինչպէս պէտք էր թելը այնպէս սիրուն ծիրանի ներկել. հարցնում էին թէ ինչպէս պէտք էր թել պանիր շինել. որ տեսել էին մեր հետ, և այն դոյնպիսի տնարարութեան բաներ: Ճշմարիտ, այդ բնութեան զաւակներու երեսի վրա և աչքի մէջ այնպէս խաղում ու նշոյլոկում էին ուրախութիւնն ու սէրը՝ որ զգում էին մեր իրենց մէջ ներկայութենէն, որ երբէք մոռացել չեմ ու չեմ մոռանալ:

Երկայնաբանութեանս երեսէն՝ դուցէ մոէչան արի սկզբում ասածս, թէ դիտմամբ էինք իջել աղայի տունը: Այո, դիտմամբ էինք իջել, որովհետև իր պաշտպանութեանը կարօտ էինք: Ճանապարհի ամենավտանգաւոր տեղը, ուր ուղևորի սիրտը տրոփում է տաղտապով և եղերը հալվում են, այդ գիւղի սահմանումն է և մեր գնալիք կողմի վրա: Իր տան մէջ այնքան օտարասէր քուրդը, բաց դաշտում՝ անծանօթ մարդու Աստուածն է: Աղան հետներս իր մարդիկներէն մէկը դրեց, որ երկիր-դալի անցքէն մեզ ապահովի հանէ: Տանուտիրոջ այդ մէկ նշանն հերիք էր ամեն ձիաւոր խմբէ մեզ անվնաս պահելու: Մի ուրիշ տեղ աչքովս տեսայ քրդի աւազակութեան չափը: Կէսօր էր, նստած էինք հացի. ներս մտաւ քուրդը և՝ «ճամբորդ եմ», հաց ուզեց. մէկ լաւաշ տուին. դոց չեղաւ լամուկը, քրդորդին, հասաւ սեղանի վրայէն բոլոր լաւաշները սրբեց տարաւ, և հայը չը համարձակեցաւ ձայն հանելու:»

—Դոքա էլ են մեր ցեղը.—ասացի Նորան:

—Այո, բայց դոքա կարող են մեր եղբայրները լինել, եթէ մենք յօժարութեամբ և եռանդով ձեռք զարկենք եղբայրացնելու արուեստին: Ես նոցա մեզ ընդունելու մեծարանքի, նամանաւանդ տան այն գողտրիկ դասի ուրախութեան ու սիրոյ մէջ, որ ասացի քեզ, այսօրուայ աչքովս տեսնում եմ մի ազնիւ բնութեան ծիլ, նոցա տան վայելչութեան և իրենց հետաքրքրութեան մէջ յառաջդիմութեան համար բեղմնաւոր լինելու սերմունք, եթէ մի բարերար անձրև և մի ջերմիկ արև գան իջնեն նոցա վրայ: Բայց եթէ առ այժմ չունենք մեզ հետ եղբայրացնելու կարողութիւնը, գէթ նոցա սանձելու համար յաւելցնենք մեր այլ յատկութեանց վրա նաև այն, նիզակով խորտակենք նոցա նիզակը: Նոքա որսական արծիւներ են, իրենց բոյնը շատ անգամ ժայռի մէջ է, իրենց բիները միշտ աւարի վրա սրուած. կրենք մենք մեր ուսի վրա սայրասուր նետերու կապարճը: Այդ կարիճները չեն ուզեցել մի անկարգ և քմահաճ կառավարութեան ենթարկվիլ, ուստի սիրել են ժայռերու ազատութիւնը. չեն ուզեցել իրենց կապը փաշաներու ձեռքը տալ, ուստի թուրն իրենց մէջքէն միշտ կախ են պահել: Բայց ինչու պէտք է անմիտ և անիրաւ փաշայի յանցանքը հայը տուժէ: Այնպիսի անկարգ և վայրենի դրութեան մէջ եթէ գլուխդ կախես՝ ամեն անցնող կը զարկէ:

(Կը շարունակվի)

բողացայ իմանալ բացի գանձապահից, միայն հաւաստի գիտեմ, որ իւրաքանչիւր գործակատար հայի հետ եղել է մի թուրք գործակատար:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 28-ին տեղի ունեցաւ ԹԻՖԼԻՍԻ արուեստագործական դպրոցի և քաղաքային ուսումնարանի բացումը: Բացմանը ներկայ էին՝ Կովկասեան Փոխարքայի օգնականը, ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, փոխ-նահանգապետ, դումայի և արուեստաւոր դասի ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն: Քաղաքագլխի օգնական պ. Թամամշեվ բացմանը յարմար ճառ ասեց:

—

ՆՈՎՈ-ԻՎԱՆՈՎԻՑ, պ. Ալէքսանդր Շահինեանից ստացանք տարեկան վճարը 10 ռուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան, որ այժմ կուղարկենք «Միացեալ ընկերութեանը:»

—

Ստացանք պ. Մէքայէլ Երկայնեանից, ՏԱԳԱՆՐՕԳ քաղաքից 5 ռուբլ յօգուտ Վասպուրականի հայ սովատանջների:

—

Ս. Պետերբուրգի գերմանական «Ս. Պետերբուրգեան լրագիրը» խօսելով զօկտոր Գրիգոր Ալիշանեանց դասախօսութեան մասին «Սովը Թիւրքահայաստանում», որ թարգմանել է գերմաներէն լեզուով Աբրահամ Սմիրխանեանց, ասում է, որ այդ բրոշիւրը ոչ թէ միայն Հայաստանի սովի մասին բաւական տեղեկութիւն է տալիս ընթերցողին, բայց իր երկրորդ մասի մէջ այնպիսի մտքեր է յայտնում հացի հայթայթման մասին, որ անուշադիր չէ կարող թողնել ռուս ընթերցողը, աչքի առջև ունենալով որ եւրոպական Ռուսաստանի մի քանի նահանգներում այժմ թանգութիւն և երաշտութիւն է, այնպէս որ նոյն տնտեսական խնդիրը արդեօք հացի հայթայթման վերաբերութեամբ ինքնաօգնութիւն թէ կառավարութեան օգնութիւն է նախապատուելի, պէտք է մտիկ ապագայում վճռվի և Ռուսաստանում: Գերմանական լրագիրը խորհուրդ է տալիս ռուս հասարակութեանը կարդալ այդ բրոշիւրը:

—

Յօգուտ Վանի սովատանջների ստացանք 35 ռուբլ Թիֆլիսաբնակ հետեւեալ անձինքներից: Խեչոյ Գալումով 3 ր., Աւետիք Վարդապետեանց 3 ր Գրիգոր Մեհրաբեանց 3., Անայտ 2 ր., Տիգրան Գուլնազարեան 2 ր., Յովսէփ Խաչատրով 3 ր., օրիորդ Մարիամ Շանշեանց 5 ր., օրիորդ Սոփիա Շահնազարեանց 5 ր., Եաղոն Էլիազով 1 ր., Աղաբէկեանց 1 ր., Կոնստանտին Ալիխանով 1 ր., Կոնստանտին Դոլուխանեանց 1 ր.: Ընդամենը 35 ռուբլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՆԻՆԷԱՆ ԳՈՐԾԵՐ

—

«Ռէյտերի» ընկերութեանը հեռագրում են Կ. Պոլսից սեպտեմբերի 23-ից: Դեսպաններին յանձնված Բ. Դրան գրութեան մէջ ասված է. «Զիջելով մեծ պետութիւնների անընդհատ ճնշմանը, Բ. Դուռը որոշեց քննել անվճիռ մնացած բոլոր հարցերը: Թիւրքաց կառավարութիւնը կաշխատի համոզել ալբանցիներին, որ նրանք յանձնեն չերնոգորցիներին Դուլցինիո արդէն յայտնի պայմաններով: Յունաստանի վերաբերութեամբ Բ. Դուռը մի սահման է առաջարկում, որ սկսվում է հիւսիսից Վոլոի մօտ, հարաւից Լարիսսա, Մետցովո և Եանինայի մօտ և վերջանում է Արտա գետի բերանի մօտ: Խոստացած վերանորոգութիւնները կը մտցնվեն Փոքր-Ասիայի մէջ երեք ամսվայ ընթացքում: Եւրոպական Թիւրքիայի մէջ կը մտցնվեն վերանորոգութիւններ այն չափով, որ համապատասխան լինի Թիւրքիայի ամբողջութեանը: Թիւրքաց արժէթղթերի օտարահպատակ տէրերը կը հրաւիրվեն, որ ուղարկեն Կ. Պոլիս իրանց հաւատարմատարներին համաձայնութիւն կայացնելու համար: Մի քանի ե. կամուտներ կը յատկացնվեն տօկոսները վճարելու համար: Այս վերանորոգութիւնները առաջարկելով, Բ. Դուռը պնդում է, որ պետութիւնները հրաժարվեն ծովային ցոյցից:

«Հաւասի» ընկերութիւնը հոկտեմբերի 1-ին հաղորդեց Ֆրանսիական լրագիրներին, որ սխալ է այն լուրը, իբր թէ Ֆրանսիական նաւերը յետ են կանչված Ադրիական ծովից: Ֆրանսիական կառավարութիւնը հաստատ վճռել է, հետեւելով զոյշ քաղաքականութեանը, չը բաժանվել եւրոպական համաձայնութենից:

Փարիզի մէջ հրատարակվող «Temps» լրագիրը տպել է հետեւեալը: Լրագիրներից մէկի մէջ լուր է տպված իբր թէ Ֆրանսիական նաւերը յետ են կանչված Ադրիական ծովից: Նոյն լրագիրը դուշակում է նոյնպէս և միւս պետութիւնների նաւերի յատ կանչելը և ծովային ցոյցի յետաձգելը: Այդ լուրը սխալ է և դրա տարածվելու պատճառը դարձել է հետեւեալ իրողութիւնը: Որովհետև Գրաւօզա նաւահանգիստի մէջ անդադար փոթորիկներ են լինում, հետեւապէս նաւատորմն էլ այդտեղ վտանգի է ենթարկվում, այդ պատճառով վճռված է նաւատորմը տեղափոխել Բօկկադի Կատարո նաւահանգիստը, որ Բագուզայի և Դուլցինիօի մէջ տեղն է գտնվում: Ծովային ցոյցի յետաձգելու մասին ոչ ոք չէ էլ մտածում: Մասնաւորապէս Ֆրանսիան դիտաւորութիւն չունի անջատվել եւրոպական համաձայնութենից: Նա պահպանում է իր դրութիւնը, պետութիւնների հետ համաձայն է գործում և Ֆրանսիական ծովապետին տուած առանձին հրահանգները անփոփոխ է թողնում: Հաւատացնում են, որ Անգլիան մտադիր է արտաքոյ կարգի միջոցներ գործադրել, եթէ եւրոպական համաձայնութիւնը խախտվի: Պէտք է աւելացնել, որ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը շուտով կընդունի անգլիական դեսպան Լայոնսին, որ կը գայ Լօնդօնից և կը յայտնի անգլիական կառավարութեան վճիռները:

Լօնդօնի մէջ հրատարակվող «Stand rd» լրագրին Բագուզայից հաղորդում են, որ աւստրիական աղբիւրներից ստացված այն լուրը, իբր թէ ալբանցիները այրել են Դուլցինիօ քաղաքը, սխալ է: Հէնց որ այդ լուրը ստացվեցաւ, ծովապետ Սէյմուր ուղարկեց մի աւստրիական նաւ անցքի մանրամասները իմանալու համար: Նաւի հրամանատարը տեղեկացաւ, որ այդպիսի անցք չէ պատահել:

Լօնդօնից «Temps» լրագրին գրում են սեպտեմբերի 28-ից: Երէկ երեկոյեան յոյն վաճառականները մի քանի մասնաւոր նամակներ ստացան, որոնք չափազանց անհանգստացնող լուրեր են պարունակում: Այդ լուրերից երևում է, որ սուլթանը չէ յետ կանչում Ռիզա-փաշայի զօրքերին և մտադիր է ընդդիմանալ Եւրոպայի կամքին:

Ալբանցիները յոյս են դրել այդ զօրքերի օգնութեան վրա, իսկ չերնոգորցիները գործ չեն սկսում, պահանջելով Թիւրքաց կանոնաւոր զօրքերի հեռանալը: Ասում են, որ պ. Դոշեն հեռագրել է արտաքին գործերի մինիստրին, որ իբր թէ Կ. Պոլսի մէջ լուր է տարածվում սուլթանի խելագարութեան մասին:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավէժ, 23 սեպտեմբ.

Այս միջոցիս Պարսկաստանում խիստ հետաքրքրական լուրեր կան, որոնցից մինն է առաջին նախարարի՝ Սիէհսալարի անկումը Վեհափառ Շահի հրամանով, իսկ աւելի հետաքրքրականն է հռչակաւոր Շէյխ Իբադուլլահի արշաւանքը դէպի Պարսկաստանի սահմանները: Քիւրդերի այդ դենպետսպարապետը՝ վաղուց է որ մեծամեծ պատրաստութեան վրա էր, վաղուց է, որ նա իր մտքումը դրել էր կատարել մի ապստամբութիւն, որ պիտի տարածվէր ամբողջ Ատրպատականի դաւառների վրա: Մի կայծ միայն բաւական էր լեռնական մարեշալի պատերազմի նշան տալուն, այդ էլ իրօք պատահեցաւ: Քիւրդստանի այն մեծ կտորը՝ որ բազմաթիւ քիւրդ ցեղերով ընկած է պարսից բաժնում, արդէն մի համեղ պատառ էր Շէյխի համար և սրբազան պարտաւորութիւն դուրս բերել նորան շիաների (պարսիկների) ձեռքից և ենթարկել իր Նոր ձեռնարկած սիւնի իշխանութեան տակ: Մի քանի շաբաթ առաջ, Սոլուքբուլաղ քաղաքում քիւրդ Համզ աղան, որը Մանգուռ ասված ցեղի գլխաւորն է, մի որ և իցէ պատճառի համար ապստամբելով պարսից կառավարութիւնից, իսկոյն անցաւ իր քաջ պատերազմող ցեղի հետ Թիւրքաց քրդարնակ երկիրը, ուր Շէյխը նորան գրկաբաց ընդունեց իր դրօշակի տակ, որին գուցէ նա վաղուց սպասում էր: Այժմ Համզաղան և Շէյխ-Իբադուլլահի Շէյխ-Գադրը որդին նշանակվել են նորանից մի մի զօրավարներ, որոնք իրանց բազմաթիւ քիւրդ ասպատակներով անցել են Թիւրքաց սահմանը և մտել պարսից հողը և, ըստ ոմանց մի քանի տեղերի էլ արդէն տիրացել են: Այս վայրենի խառնիճաղանճի զօրավարները Շէյխի կողմից համարձակ սպառնում են տիրապետել Ռէվանդուզից սկսեալ մինչև Ուշնի, Սոլուքբուլաղ, Սուլդուզ, Սէրդաշտ, Սակըզ, Բենաբ և դորանց բոլոր շրջակայ տայածութիւնը, համարելով սրանց քրդական երկիր, որովհետև այդ տեղերում բաւական սիւններներ են բնակած: Սոլուքբուլաղ քաղաքի բնակիչներն այժմ գրեթէ ցրված են երկիւղից. այդ քաղաքում կային մի քանի տուն բնիկ և մի քանի հոգի օտարական հայեր, սրանք բոլորն էլ խոյս տալով իրանց տեղից, եկան հասան Դավրէժ: Դորանց հետ էին երկու դորեցիներ՝ պ. Ա. Տէր-Յակոբով և պ. Խուդադով, սորանցից առաջինը նոյն քաղաքում գլուխ վաճառականաց էր և երկրորդը փաստաբան: Պ. Տէր-Յակոբովը լինելով բարեկամ Համզ աղաի հետ, նորանից աղդարարութիւն էր ստացել առաջամանակ հեռանալ Սոլուքբուլաղից, այդ պատճառաւ նա շտապել էր դուրս գալ պաշարման ենթարկված երկրից, որի հետ և դուրս էին եկել բոլոր հայերը՝ ինչպէս և շիա պարսիկները: Ցիշեալ երկու պարոնները ինձ անձամբ պատմեցին այս բոլոր անցքերը: Սոլուքբուլաղ գաւառի կառավարիչ արքայազուն պարսիկ իշխանը, տեսնելով որ իրան ևս վտանգ է սպառնում, հեռացաւ իր պաշտօնատեղից և դիմեց նոյնպէս դէպի Դավրէժ: Պարսից կառավարութիւնը այս հանգամանք իմանալով, մի քանի բատալիօններ, զանազան հեծելազօրներ և թնդանօթներ դրկեց, որ ապստամբութիւնը զսպեն, մի քանի վաշտ զօրք ևս նորից պատրաստվում են գնալու: Հետևապէս մեծ յոյս կայ, որ Շէյխի ամպարտաւան փառասիրութիւնը շուտով կը պատժեն և նորա զօրութիւնը կը խորտակեն, թէև ասում են, որ նա մինչև 60 հազար անկանոն զօրք ունի պատրաստի, բայց դժուար թէ ուղիղ լինի: Այն միայն ճշմարիտ է, որ բոլոր քիւրդերը այս միջոցիս ոչ միայն հպատակում են, այլ նորան մի խօսքն անգամ ընդունում են իբրև Աստուածային պատգամ: Շէյխը մի գիւղից կամ քաղաքից անցած ժամանակ, վերջին մշակ քիւրդից սկսեալ մինչև աղաները, բէգերը և ցեղապետները, բոբիկ ոտքերով գնում են նորա առաջ և չոքում, որպէս զի փէշերը, ոտքերը, կօշիկները և մինչև անգամ ձիու ոտքերը համբուրեն: Մի լեռնական ապստամբապետ, այն էլ կրօնաւոր, երբ այդ աստիճանի ջերմութեամբ պաշտվում է իր ցեղակիցներից անմատչելի լեռներում, ուրեմն հաւանական է, որ հակառակ դէպքում՝ նա շատ աւելի մարդ կարող է զէնքի տակ հրաւիրել: Բայց և այնպէս, շատ անգամ տեսնված է, որ այդպիսի ապստամբութիւնները մի ճախող դիպուածով, իսկոյն ցրվում են և անհետանում, որովհետև ապստամբողների մեծագոյն մասը ոգևորվում են այս և այն մարդու առերևոյթ նպաստաւոր յոյսերով, էէնց որ նշմարում են մի մօտալուտ վտանգ, այդ յոյսերը օդն են ցնդում և իրանք սարսափի տակ ընկնում:

Այսօր դարձեալ զանազան լուրեր ստացվեցան մեր քաղաքում, որ իբր Շէյխ-Գադրը 10 հազարից աւելի քիւրդ պատերազմողներով, այն էլ Հանրի-Մարտինի հրացաններով զինված՝ ոչ միայն մտել է Սոլուքբուլաղ քաղաքը, այլ այդ տեղից էլ առաջացել է մինչև Միանդուաբ և Բինաբ որ մօտ է Մարաղա քաղաքին, որ տեղի հայերն էլ սարսափեցին և փախան: Լսեցի որ մի քանի հայերին ճանապարհներում կողոպտել են և մի քանի պարսիկների էլ սպանել: Դարձեալ մի լուր. ասում են, որ Վանի կողմերում քրդերը 70-ի չափ հայեր կոտորել են Շէյխի հրամանով: Բայց տեսնենք ո՞վ է այս Շէյխ Իբադուլլահը, և ո՞րտեղից գտաւ այսքան զօրութիւն: Այստեղ արևի լոյսի պէս երևում է մի աներևոյթ ոյժ, որը Շէյխին մատնացոյց է լինում «դէպի առաջ», սակայն ինքը թագչում է....

Շէյխ Իբադուլլահի հայրը եղել է մի դավրիշ, մի ճարպիկ մարդ, որը անդադար պտտելով քիւրդերի մէջ, աշխատել է բորբոքել նրանց սրտի հանգած հուրը՝ դէպի իրանց սուրբ կրօնը, միշտ ասելի ցոյց տալով արշամարշելի քրիստոնեան—նողկալի «գեավուրը», որի ջանը (անձը) հալալ է սպանելու և ապրանքն գրաւելու, իբրև քիւրդի յատուկ սեփականութիւն: Այսպէս աւանդապետ Շէյխը, վառելով լեռնական քրդերի սիրտը, մի քանի տարուան մէջ, ինքն էլ հասնում է իր նպատակին, որովհետև քրդերը նրան արժանացնում են շէյխութեան (հոգևոր աստիճան է:) Նա ձեռք է գցում մի քանի գիւղեր և ապա մեռնում է, որից յետոյ անմիջապէս ներկայ Շէյխ-Իբադուլլաը ժառանգաբար յաջորդում է իր հօրը, որպէս Շէյխ: Սրա համար ասում են՝, որ իր հօր կենդանութեան ժամանակ գալով Սոլուքբուլաղ քաղաքը, այնտեղ է աւարտել իր արաբական լեզուի ուսումը: Շէյխ-Իբադուլլահը՝ աւելի ճարպիկ լինելով, և զանազան ասպատակութիւններ անելով, հասնում է մեծ հարստութեան, այնպէս որ՝ այժմ նրա կալուածները և գիւղերը 200 կտորից աւելի են, որոնք ցրված են Վանայ ծովակից մինչև Մուսուլ և Սուլէյմանի, Կորդուաց լեռների ուղղութեամբ: Վերջին պատերազմի ժամանակ Շէյխ Իբադուլլահը աւելի հռչակ և աւելի հարստութիւն դատաւ: Հանգամանքները նրան լաւ յաջողվեցան, այժմ նա կատարեալ բռնապետ է և ինքն էլ ունի պատերազմական սիրտ և կրթութիւն: Ես դիպուածով տեսայ նրա մի թիկնապահին, որպէս ծպտեալ փախստական, որ եկել էր այստեղից Ռուսաստան փախչելու համար, իբր Շէյխի երեսից. սակայն՝ նա, իմ կարծիքով, Պարսկաստանի և Ռուսաստանի քրդերը ոգևորելու համար էր մանդալիս: Նա պատմեց, որ Շէյխը իւրաքանչիւր ուրբաթ օր՝ ոչ միայն զօրաժողով է անում, այլ բոլոր ցեղապետներին և կարդացողներին մէջլիս է հրաւիրում, և զանազան խորհուրդներ անում, արշաւանքի համար: Նրան սարսափեցնում է միայն գենէրալ Տէր-Ղուկասովի անունը իր կօզակներով. այդ յաղթական մարդու անունից է միայն սարսափում նա: Շէյխը, որպէս բռնապետ, խիստ է վարվում չարագործների հետ, նա կախել է տալիս, ողջ ողջ թաղել է տալիս, գլուխներ է կտրել տալիս, եթէ որ յանդգնել էին նրա իշխանութեան մէջ մի որ և իցէ եղեռնագործութիւն անել: Նա ունի, ասում էր, մեծամեծ թնդանօթներ և ամբողջ իր զօրքի համար Մարտինի հրացաններ.—շատ բարի, բայց ո՞վ տուաւ նրան...

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Ազգային ժողովը կը գումարվի նոյեմբերի 9-ին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 2 հոկտեմբերի: Երկրի շրջաբերութեան մէջ եղած ամերիկական դրամի քանակութիւնը հաշված է 370 միլիոն դօլար ոսկի և 150 միլիոն դօլար արծաթ: Բացի այդ պետական դանձարանի մէջ կան 68 միլիոնի ձուլած ոսկու կտորներ և 51½ միլիոն արծաթի կտորներ:

Կ. ՊՕԼԻՍ, 2 հոկտեմբերի: Ասիմ փաշա յայտնեց պետութիւնների դեսպաններին, որ Բ. Դուռը Դուլցինիօի ամբողջ նահանգը անյապաղ կը յանձնի չերնոգորցիներին:

ՓԱՐԻԶ, 2 հոկտեմբերի: Ֆելիկս Պիա ենթարկված է դատարանին բերելու օվսկու հրաբորձութիւնը դովելու պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 12 կ., երկրորդ 12 ր. կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 82 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 216 ր., երկրորդ 210 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 8 ր. 16 կ., Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 203 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 257 Ֆրանկ: Տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական Գրավաճառանոցի հրատարակութեամբ այս օրերս լոյս տեսան Սամսոն աւագ քահանայ Տէր-Ստեփանեանցի աշխատասիրած «Սկզբունք քրիստոնէական ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» դասագրքի երկրորդ տպագրութիւնը հետեւեալ յաւելուածներով. համար. 11. Յակոբ նահապետի որդիքը. 12. Յովսէփը բանտում. 13. Յովսէփի փառքը. 14. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 15. Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստը Եգիպտոս, 16. Թէ ինչպէս եղբայրները ճանաչեցին Յովսէփին. 17. Յակոբի Եգիպտոս տեղափոխուելը:

Աղօթք վասն թագաւորի «Խաչի քո Քրիստոս», «Այսօր կանգնեցաւ եւ Էջմիածինն ի Հօրէ» շարականները դասաւորված են իրանց տեղերում պատմութեան իմաստին համաձայն: Նկարագրութիւն տօնալուայի հանդէսի ու Թուարկութիւն ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի սահմանուած տօների: Գինը ըստ առաջնոյն 50 կոպէկ է:

Վերջապէս հարցմունքները, որոնք առաջին տպագրութեան մէջ զետեղուած էին իւրաքանչիւր յօդուածի ներքոյ, այժմ ամփոփուեցան գրքերի վերջումը առանձնապէս:

—

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է նոյն գրավաճառանոցում «Նոր դասագիրք Թուաբանութեան» Գ. Վարձելեանի, գինն է 70 կոպէկ:

—

			Ր.	Կ.
1.	Ժողովրդական այբբենարան	. . . . . .	—	5.
2.	Տէր-Պետրոսեան Մայրենի լեզու ա. տ.	. . . . .	—	35.
3.	— — Մայրենի լեզու բ. տ.	. . . . .	—	40.
4.	— — Մայրենի լեզու գ. և դ. տ.	. . . . .	—	70.
5.	Աղայեանց ուսումն Մայրենի լեզուի	. . . . .	—	15.
6.	Ս. Մանդինեան Նահապետական և Հայր. աշխահ.	. . .	—	60.
7.	— Ազգային բնատնեկան աշխարհ ա. տ.	. . . .	—	25.
8	— — Դիւցազանց. աշխարհ	. . . . .	—	30.
9.	— Ազգ. ու բնտան. աշխարհ ուսուցչաց ձեռնարկ	. . .	—	70.
10.	Տէր-Դաւթեան դասագիրք ռ. լ. Русское Слово	. . .	—	45.
11.	Այվազեան Գ. Ա. Ե. Նախակրթանք հ. լեզուի մ. ա.	. .	—	40.
12.	Եղիշէ, պատմութիւն Վարդանանց	. . . . .	1.	—
13.	— Նոյն հասարակ կազմի վրա	. . . . .	—	20.
14.	Տէր-Սարգսեան հայերէն վայելչագրութեան օրինակ.	. .	—	20.
5.	Պալասանեան Քերականութիւն Մայրենի լեզուի	. . .	—	50.

Վերոյիշեալ գրքերի գնողները «Կենտրոնական գրավաճառանոցից» նշանաւոր զեղչումն են ստանում:

Մի մոլդավեցի պարոն, Յովհաննէս Նազըձեան, որ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ Վ.ԿԱՅԱԿԱՆ ունին Վեհափառ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ, ցանկանում է ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԵԿԵՂԵՑԱԿԱՆ երգեցողութեան ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ստանալ: Հասցէն. Թիֆլիսի Հայոց կոնսիստորիա, հարցնել Յովհաննէս Նազըձեանին:

3—8

ՎԱՐՁՈՎ է տրվում 6 ՍԵՆԵԱԿ ԽՈՀԱՆՈՑՈՎ, ՆԵՐՔՆԱՏՆՈՎ և այլ յարմարութիւններով: Մանաւանդ յարմար է ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Նորաշենսկայա փողոց, Իսակ ՓՈՒՂԻՆՕՎԻ տուն: Գնի մասին կարելի է նոյն տեղը տեղեկանալ:

2—2

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվեցաւ ՇՕԿՕԼԱԴ ԵՒ ԿԱԿԱՕ ՖՐԱՑ

6—20

Ծախվում է մի ՏՈՒՆ ԱՑԳՒՈՎ ԵՒ ԲԱԿՈՎ 450 սաժ. մեծութեամբ. գտնվում է ՎԵՐԱ, ԱՐՋԱՆԻ ՁԱԽ ԿՈՂՄԸ, բարձրութեան րա: Բացի այդ նոյն տեղը ծախվում է 1000 սաժ. ՀՈՂ միասին և մաս մաս:

3—3

Ի. Կ. ԵՍԿՈՒԼՕՎ

ՆԵՐԴՎԵԱԼ ՀԱԽԱՏԱՐՄԱՏԱՐ յայտնում է իր կլիենտներին, որ նա փոխեց իր հին ԲՆԱԿԱՐԱՆԸ և այժմ բնակվում է Երեվանսկայա փողոցի վրա, տուն Ալէքսանդր Բաբանասովի № 12:

1—3

ՎԱՐՁՈՎ տրվում է ՉՈՐՍ սենեակից բաղկացած մի բնակարան, խոհանոցով և ներքնատնով Օրբէլեանիի փողոցի վրա № 4, ներքին յարկում, Յակոբ Դանդուրովի տան:

1—5

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարեւոր մի գիրք «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. Հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. Հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. Հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղչումն կը դրուի. գնելու համար դիմել—Ալէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենտրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մելքոն Փանեանցին:

10—10

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանի պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում. Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Ցենտրալնայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը:

8—8 (2 շաբ.)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գորալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբորսկի վեներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգեր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտեյմբորսկի վեներական և կաշու հ., Աստուածատուրօվ կանանց հիւանդութիւների:

Հինգշաբթի. Գավրոնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբորսկի և Աստվածատուրօվ ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առանձնաբոյժ Օբբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ПОСТУПИЛА ВЪ ПРОДАЖУ НОВАЯ КНИГА

ЗАКОНЫ

О ДУХОВНЫХЪ ЗАВѢЩАНІЯХЪ

Составилъ присяжный повѣренный Г. В. Бертгольдтъ, съ поясненм̃ъ текста законовъ. и съ приложеніемъ подробныхъ буквальныхъ извлеченій изъ рѣшеній гражд. кас. деп. сената, состоявшихся съ 1867 г. по 1879 г. включительно, рѣшеній Общихъ Собраній Сената и Высочайше утвержденныхъ мнѣній Госуд. Совѣта. Къ книгѣ приложены постатейный указатель и алфавиты, облегчающіе пользованіе книгою.

Цѣна 3 р. 50 к., съ пересылкою 4 руб. Книгопродавцамъ обычная уступка, складъ книги у издателя Г. Бертгольдтъ, въ Москвѣ, на Тверской въ домѣ Хомяковыхъ, бывш. Пораховщикова, кв. № 16. Иногородные могутъ обращаться во всѣ на и болѣе извѣстные книжные магазины и къ издателю; выписывающіе книгу прямо отъ г. Бертгольдтъ, за пересылку не плотятъ.

1—1

Ընդունում եմ ամեն տեսակ պատւէրներ ԿՕՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԻՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԷԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի տարտերի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբար. ցանկացողք կարող են դիմել ինձ հետեւեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИГОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստայիւ կօնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

19—50

ՆՈՐ ՀԱՆԴԷՍ

ՖԻԼԻՊՕՎԻՉ ԵՒ ԸՆԿ. ԼՈՒՍԱՆԿԱՐԻ չորս ամսվայ գործունէութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօլօվինսկի փողոց, տուն Կ. Եա. Զուբալովի, Թիֆլիսի կրուժի մօտ: Բաց է ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

9—10

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետեւեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . 30 կ
4. Նահապետական և Հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . 65 կ



Կ. ՊԱՆՑԵՐ, ԵՏՍՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ԶՈՒԲԱԼՕՎԻ: Եկող ձմեռվայ սեզոնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ, չափազանց ԷԺԱՆ գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—5 րուբլ: Ոտքի 50—80 րուբլ:



16—52

Дозволено цензурою Тифлисъ, 3 Октября 1880 г. Տպարան եղբարց Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ